

63
94

[1927]

14 JUN 2013

17 FEB 2010

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

336.3

Z-94

26

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ 1927 Թ. ՅԵՐՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽԱՂԱՐԿՈՒ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ
ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՆՍԻՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
 ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅԱՆ,
 ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
 ԳՐԱՌԵՊ. 330Է
 ՏԻՐԱԺ 150. Պ. 115

Լ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Գյուղատնտեսական վարկի սխեման, վոր կոչված է կազմակերպելու գյուղի դրամական շուկան, այնպիսի խոր արժաններ է ձգել գյուղական կյանքում և կազմակերպչական-ֆինանսական տեսակետից այնքան է ամրապնդվել, վոր այժմ, որենադրական ձևակերպում ստանալով, պետք է իր բաժին մասնակցությունը հայտ բերի Խորհրդային Միության ֆինանսական տնտեսության ընդհանուր աշխատանքներում:

2. Նկատի առնելով այդ, ինչպես և հիմնվելով ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1927 թ. մարտի 11-ի վորոշման վրա (Известия ЦИК СССР-նույն թվի ապրիլի 11-ի № 74), Կենտրոնական Գյուղատնտեսական Բանկը, գյուղատնտեսական վարկի ամբողջ սխեման կողմից համաձայնություն է կնքել ԽՍՀՄ Ֆինանսական Կոմիտեի հետ Յերրորդ Պետական Գյուղացիական Խաղարկու Փոխառության խոշոր մասը գյուղավարկի ցանցի միջոցով իրացնելու մասին:

3. Գյուղատնտեսական վարկի Համամիութենական Յերկրորդ համագումարը, լսելով զեկուցում Յերկրորդ Պետական Գյուղացիական Խաղարկու Փոխառություն կազմակերպելու մասին և մեկնելով այն դրությունից, վոր այդ փոխառությունը հանդիսանում է գյուղացիական խնայողությունները ներգրավելու ձևերից մեկը, վորպիսի աշխատանքը մեծ չափով նպաստելու յե գյուղատնտեսության ֆինանսավորման գործին, վորոշել է, վոր գյուղավարկի սխեման ամենագործոն մասնակցությունը ցույց տա այդ փոխառությունը իրացնելու գործում:

4. Յերրորդ Գյուղացիական Խաղարկու Փոխառությունն ունի միանգամայն վորոշ նպատակ, այն է, նա կոչված է ուժեղացնելու ԽՍՀ Միության գյուղատնտեսության բարձրացման համար հատկացված բյուջետային միջոցները, և բաց է թողնվում յերեք տարի ժամանակով, մանր պարտատուներով, հինգ և տաս ուսուլի արժույթյամբ, տարեկան տասնյոթ տոկոսյա միջին հասույթաբերությամբ, վորից 11% հատկացվում է խաղարկության համար, իսկ 6%՝ վերածվում է կտրոնների, ըստ վորում փոխառության հրատարակման առաջին տարին պարտատուները տալիս են 21% չափով հասույթ, հաշվելով պարտատուները և արկունները: Նկատի առնելով այն, վոր շահող պարտատուների քանակն առանձնապես խոշոր թիվ է կազմում (միջին թվով՝ յոթ պարտատուներից մեկը շա-

հում է), պետք է յենթադրել, Վոր գյուղի ազգաբնակիչները մեծ հետաքրքրություն կը ցուցահանի զեպի փոխառությունը:

Գյուղական բնակչության մեջ իրացվող այդ փոխառությունից ստացված դրամական միջոցները նորից գյուղ են վերադառնալու և գործադրվելու յեն գյուղատնտեսության զարգացման և ամրապնդման համար, իսկ գյուղավարկային ընկերությունների միջոցով իրացվող գումարի տաս տոկոսը թողնվելու յե, իբրև անտոկոս ավանդ, ընկերությունների հիմնական դրամադուլներն ուժեղացնելու համար: Փոխառության իրացման աշխատանքների ընթացքում փոխառության այդ հիմնական պայմանները պետք է լավ պարզաբանվեն գյուղացիությանը:

5. Համաձայն 2-րդ հոդվ. նշված համաձայնության, վորը կնքված է Կենտրոնականի և ԽՍՀՄ Ֆինոնկոմատի միջև, գյուղավարկի սխտեմի կողմից պետք է իրացվի 15 միլիոն ռուբ. գումարի պարտատոմս, ըստ վորում Կենտրոնականի լիակատար պատասխանատվություն է հանձն առել այն մասին, վոր գյուղավարկի սխտեմի հիմնարկները ճշտությամբ կատարելու յեն հիշյալ պայմանագիրը:

6. Պայմանագրի համաձայն, գյուղավարկի սխտեմի հիմնարկները և նրանց կողմից լիազորված յենթադործակալները փոխառության պարտատոմսերը պետք է իրացնեն կանխիկ հաշվով, լրիվ գանձեն պարտատոմսերի արժեքը, տոկոսների բարդում կատարեն ըստ ընթացիկ կտրոնի, առ վաճառքի որը (վաճառքի որը հաշվի չի առնվում), և անվանական գնով:

Փոխառության պարտատոմսերը պետք է իրացվեն գյուղում՝ գյուղական բնակչության մեջ և բացառապես կամավոր գնման կարգով: Քաղաքներում, քաղաքի բնակչության մեջ այդ պարտատոմսերը չպետք է վաճառվեն: Հանրապետական բանկերին իրավունք է վերապահվում ոգտադործել իրենց կողմերատիվ կլիենտներին փոխառության պարտատոմսերը տարածելու համար, միայն գարձյալ գյուղում իրացնելու նպատակով:

7. Հանձն առնելով Յերրորդ Գյուղացիական Փոխառությունն իրացնելու պարտականությունը, գյուղավարկի սխտեմը պետք է իբրեն նպատակ դնի վոչ միայն փոխառությունը հասցնելու գյուղական խրճիթները, այլև հայտնաբերելու գյուղում պետական փոխառությունների տարածման նպատակահարմար ուղիներ նաև ապագայի համար, նույն գյուղավարկի սխտեմի միջոցով:

8. Այդ նպատակի գործնական կիրառումը պետք է կատարվի հանրապետական գյուղատնտեսական բանկերի անմիջական ղեկավարությամբ և Կենտրոնական Գյուղբանկի ընդհանուր նսկողությամբ:

9. Նկատի առնելով Յերրորդ Գյուղացիական Փոխառության իրացման հետ կապված աշխատանքների բարդությունն ու գծավորությունը, անհրաժեշտ է, վոր գյուղավարկի սխտեմի բոլոր ողակ-

ները պարզ գիտակցեն, վոր առանց գյուղական պատրաստված կլիենտների, սովորական գործառնությունների միջոցով փոխառությունն իրացնելն անհնարին է: Այդ գործը պետք է այնպես կազմակերպվի, վոր գյուղական բնակչությունը մշտական շահագրգռություն պահպանի զեպի փոխառությունը: Այդ ուղղությամբ ընկերությունները պետք է առանձին յեռանդ ցուցահանեն:

10. Յերրորդ Գյուղացիական Փոխառության իրացման աշխատանքի հիմնական գծավարությունն այն է, վոր գյուղական բնակչությունն անպատրաստ է, վոր նա զեռ չունի այն գիտակցությունը, վոր ինայողությունը պետական փոխառությունների մեջ գնելը տնտեսած միջոցներն ապահովելու լավագույն ձևերից մեկն է:

Գյուղացուն շահագրգռելը, փոխառության իրական առավելությունները վեր հանելը փոխառության իրացման հաջողության գըրավականն է: Գյուղացու մեջ հետաքրքրություն առաջ բերելու համար անհրաժեշտ է պարզել նրա համար այն իրական առավելությունները, վոր ունի հինգ դուրիանոց պարտատոմսը հնգանոց թղթադրամի հանդեպ: Յեթե այդպիսի տրամադրություն ստեղծվի գյուղացու մեջ, նշանակում է, վոր մենք արգեն հասել ենք մեր նպատակին, ասել է, վոր գյուղացին իրեն շահագրգռված է զգում փոխառության գործում:

11. Նման պայմաններում, փոխառության իրացման աշխատանքները պետք է հանձնել այնպիսի աշխատակիցների, վորոնք լավ ծանոթ են գյուղի կենցաղին ու տնտեսությանը, ունեն անհրաժեշտ պատրաստականություն և արգեն աչքի յեն ընկել վորպես ձեռներեց և ճշտապահ աշխատակիցներ:

Փոխառության իրացման աշխատանքները վարող յուրաքանչյուր հիմնարկություն իրեն առաջադրված հիմնական պահանջներից մեկը պետք է համարի սահմանված ձևով հաշվետվություն ներկայացնելը և գործառնական աշխատանքները ճշտությամբ կատարելը:

12. Գյուղավարկի սխտեմի բոլոր հիմնարկները պետք է պարզ գիտակցեն, վոր Յերրորդ Գյուղացիական Խաղարկու Փոխառության իրացման վերաբերմամբ իրենց ստանձնած պարտականությունները հաջողությամբ կը կատարեն նաև այն ղեպքում, յեթե նրանք կանոնավոր հիմունքներով համաձայնեցնեն իրենց աշխատանքը տեղական կուսակցական, արհեստակցական, խորհրդային, կոոպերատիվ և հասարակական հիմնարկների և կազմակերպությունների հետ, այսպիսով ապահովելով իրենց համար ամբողջ խորհրդային հասարակականության և առաջին հերթին՝ իր աշխատանքով գյուղի հետ կապված անձերի գործոն աջակցությունը:

13. Փոխառության իրացումը գյուղավարկի սխտեմում պետք

և կատարվի յեռանդուն կերպով և ավարտվի մինչև 1927 թ. նոյեմբերի 1-ը:

Այդ պայմանը նշված է համաձայնագրում և պետք է կատարվի այն հաշվով, վոր իրացման աշխատանքների վերջնական արդյունքները ամրապնդեն և բարձրացնեն գյուղավարկի սխտեմի հեղինակությունը, վորպես գյուղի գրամական շուկան կազմակերպող հաստատություն:

14. Յերրորդ Գյուղացիական Փոխառության վիճակահանության (тираж) ժամանակ գյուղավարկի սխտեմի հիմնարկների և նրանց կոոպերատիվ կլիենտների կողմից չի դադարեցվում պարտատոմսերի վաճառքը, իսկ գյուղավարկային ընկերությունների առանձին յենթագործակալները պարտատոմսերի վաճառք չեն կատարում: Առանձին յենթագործակալները, մինչև վիճակահանություն (тираж) սկսելը, պարտատոմսերը հանձնում են ընկերություններին, վորոնցից ստացել են այդպիսիները, և մինչև պարտատոմսերի պաշտոնական աղյուսակներն ընկերության կողմից ստանալը և այդ աղյուսակներն ստուգելն ըստ պարտատոմսերի, վերջիններս մնում են ընկերության մոտ: Գյուղավարկի սխտեմի հիմնարկները և նրանց կոոպերատիվ կլիենտները վիճակահանությունից մեկ օր առաջ կազմում են իրենց մոտ յեղած պարտատոմսերի ցուցակները 3 օրինակից (ձև № 10): Ցուցակի մեջ նշվում են սերիաների և պարտատոմսերի համարները և վիճակահանության ժամանակ պարտատոմսերի վաճառքը կատարվում է հաջորդական կարգով, ըստ ցուցակի: Գյուղավարկային ընկերությունները և կոոպերատիվ կլիենտները ցուցակներից մեկական օրինակ ներկայացնում են գյուղավարկի սխտեմի այն հիմնարկներին, վորոնց հետ պայմանագիր են կնքել փոխառության իրացման վերաբերյալ: Հանրապետական գյուղբանկերը ցուցակները ներկայացնում են համապատասխան ֆինամարմիններին: Վիճակահանության ժամանակ պարտատոմսերի վաճառքը կատարելու մանրամասն կարգը սահմանված է ԽՍՀՄ Ֆին. ժողկոմատի կողմից Յերրորդ Գյուղացիական Փոխառության իրացման կարգի մասին հրատարակված շրջաբերականով (գլխ. III, հ. հ. 16 և 22):

II. ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

15. Ըստ 3-րդ Գյուղացիական Խաղարկու Փոխառության բրնույթի և առանձնահատկությունների, գյուղավարկի սխտեմի ստորին ցանցին պատկանող գյուղավարկային ընկերությունների աշխատանքը պետք է կարևորագույն տեղը գրավի փոխառության իրացման գործառնական աշխատանքներում:

16. Հանրապետական գյուղբանկի կողմից գյուղավարկային ընկերություններն աշխատանքի յեն կոչվում փոխառության իրաց-

ման համար այն հիմունքներով, վոր նշված են օրինակելի (типовой) պայմանագրում:

17. Յուրաքանչյուր գյուղավարկային ընկերության վարչություն, հանձն առնելով փոխառության տարածման պարտականությունը, պետք է նախապես նկատի առնի հետևյալը. վորքան և ինչ արժողության պարտատոմսեր կարող է տարածել իր շրջանում, նկատի ունենալով գյուղացիների կողմից կատարվելիք վճարումների չափը, ինչ ժամկետներում և ինչ կարգով՝ անմիջականորեն, թե յենթագործակալների միջոցով:

18. Պայմանագիր կնքելով գյուղբանկի հետ փոխառության իրացման մասին, ընկերության վարչությունը պետք է նախորդ, մինչև փոխառության պարտատոմսերն ստանալը, ամեն միջոց ձեռք առնի ապահով վիճակում պահելու այն: Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր փաստված պարտատոմսերն ու կտրոնները, այսինքն՝ կեղտոտված, պատռված, արտված, ուղիղ չը պուկած կամ չկտրած կտրոններով և այլն, ֆին. ժողկոմատը չի ընդունում: Փոխառության պարտատոմսերն ստանալու մասին ընկերությունն անհապաղ հայտնում է ֆին. ժողկոմատի համապատասխան մարմիններին, վորոնցից ստացված են պարտատոմսերը և գյուղբանկին, վորի ցանցի մեջ է մտնում ընկերությունը:

19. Պարտատոմսերը, պետք է տարածել գյուղական բնակչության բոլոր խավերի մեջ, անկախ նրանց սոցիալ անտեսական դրությունից: Սակայն, առաջին հերթին, ընկերությունը պետք է ուշադրություն առնի բնակչության այն տարրերին, վորոնք ավելի գիտակցաբար են վերաբերվում փոխառության նպատակներին, և վորոնց մեջ ավելի գրավան արդյունք են ավել առաջին փորձեր:

20. Պարտատոմսերի վաճառքը պետք է կատարի ընկերության այն հիմունքներով, վոր հիշված են այս հրահանգի 6-րդ կետում, ըստ վորում, համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1627 թ. փետրվարի 4-ի վորոշման, իբրև պարտատոմսերի արժեքի հատուցում կարող են ընդունվել գյուղբանկի գյուղացիական փայերը:

Գյուղացիական փայերն ընդունվում են ի հատուցումն փոխառության պարտատոմսի՝ փայի լիակատար իրական արժեքով, ըստ վորում փայով կարող է հատուցվել վերցրած պարտատոմսերի անվանական արժեքի կեսը, իսկ պարտատոմսերի արժեքի մնացած մասը պետք է վճարվի կանխիկ գրամով, Միաժամանակ անհրաժեշտ է, վոր գյուղացիական փայերը լինեն անվթար (неповрежденный) և ունենան կտրոններ, ներառյալ 1927—28 թ. կտրոնը:

21. Ձեռնամուխ լինելով գյուղավարկի հետ կնքված պայմանագրի կատարման, ընկերության վարչությունը (ամբողջ կազմը) պետք է ամենից առաջ լավ ծանոթանա պայմանագրին և ներկա հրահանգին: Սույն հրահանգին հավատարմապես ծանոթ պետք է լինեն նաև խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները:

Փոխառության անմիջական տարածումն ընկերության վարչութիւնը հանձնում է վարչության նախագահին կամ վարչության փոքեւ անդամին: Վարչության մերձավոր տեխնիքական աշխատակից է դառնում այդ գործում ընկերության հաշվետարար:

22. Փոխառության իրացման ընդհանուր աշխատանքներին պետք է մասնակից դարձնել նաև խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև ընկերության տոանձին ակտիվ անդամներին: Փոխառության իրացման աշխատանքներին ընթացքում անհրաժեշտ է կենդանի կապ հաստատել շրջանի բոլոր գյուղերի հետ և աշխատել առաջին հերթին տարածելու պարտատոմսերը ավելի գիտակից, գործունյա և հարգանք վայելող գյուղացիներին մեջ:

23. Յերրորդ Գյուղացիական Փոխառության պայմաններին գյուղական բնակչութիւնը լավ ծանոթացնելու նպատակով պետք է ամբողջովին ոգտագործել ԽՍՀՄ Ֆինոգկոմատի և գյուղբանկի կողմից ուղարկված բեկլամային, ազիտացիոն և հրահանգչական բոլոր նյութերը, կիրառելով ոգտագործման նպատակահարմար ձևեր:

24. Յերրորդ Գյուղացիական Փոխառության նպատակները և պայմանները գյուղացիութիւնը պարզաբանելիս, անհրաժեշտ է, վոր ընկերութիւնն առանձնապես ընդգծի հետևյալը.

ա) Ազատ զբաղման միջոցները պետական փոխառութիւններին մեջ գնելն անպայման խնայողութիւնը ապահով դրության մեջ պահելու հուսալի և ձեռնառու միջոց է: Գյուղացու յուրաքանչյուր ուղբին, վոր զբաղում է փոխառության մեջ, զբանջվում է պետական պարտքի մատչանում և յուրաքանչյուր ուղբում համար Խորհրդային Միութիւնը պատասխանատու յե իր ամբողջ ունեցվածքով:

բ) Յերրորդ Գյուղացիական Փոխառության պարտատոմսերով յերեք տարի շարունակ, յուրաքանչյուր տարին յերկու անգամ վիճակահանութիւն է կատարվում, ըստ վորում պարտատոմսերը բացառապես խոշոր թիվ են կազմում և շահելի պարտատոմսերի գումարը հավասար է 10 ուղբուց մինչև հինգ հազար ուղբի: Բացի զբանից, պարտատոմսերի տուկսաբերութիւնը չի ընդհատվում:

գ) Փոխառության պարտատոմսերը և ժամկետավոր կարոններն իրական արժեքով ընդունվում են ի հատուցումն գյուղմիասնարկի, սկսած 1927—28 թվից, ի հատուցումն պարտադիր պետապահովագրութիւնը համար կատարելիք վճարումների, ի հատուցումն սերմ-վարկի, ի զբաղադրութիւն (залог) պետական կապալների դեպքում և ի ապահովութիւն հողամասեր և անտառամասեր, արգլուհաբերական ձեռնարկութիւններ և այլն՝ վարձակալական հիմունքներով շահագործելու համար կնքվող պայմանագրերի:

և գ) Փոխառության պարտատոմսերի արժեքի կեսը կարող է հատուցվել գյուղացիական փայերով (հրահանգի հոդ. 20):

25. Նպատակ ունենալով լալն կերպով ծանոթացնելու գյուղական մատաներին Յ-րդ Գյուղացիական Փոխառության պայմաններին և առավելութիւններին, անհրաժեշտ է, վոր ընկերութիւնների վարչութիւնները փոխառության իրացման աշխատանքներին մասնակից դարձնեն նաև գյուղի կուլտուրական ուժերին՝ շրջանային գյուղատնտեսին, հողաշափին, բժշկին, անտառապետին, զարուցական աշխատավորներին, խորհրդային անտեսութիւնների կառավարիչներին, խրճիթ ընթերցարանների վարիչներին, արտելների և կոմունաների կառավարիչներին և այլն, հանձնարարելով նրանց պարզաբանելու գյուղացիներին փոխառության պայմանները և ոգտակարութիւնը:

36. Գյուղական բնակչության փստահութիւնը, վստիյող այն անձերին, վորոնք աշխատում են գյուղի կուլտուր-կրթական և հարակից հաստատութիւններում, գյուղվարկային ընկերութիւնները կարող են ոգտագործել իրրի փոխառության պարտատոմսերը տարածող յենթադործակալներին, կնքելով նրանց հետ համապատասխան համաձայնագրեր (պարտավորագրեր): Յենթադործակալի աշխատանքը կարող է մարձատրվել ընկերութիւն կողմից՝ նրա ստացած կոմիսիոն գումարներից:

27. Փոխառության պարտատոմսերը տարածելու համար յենթադործակալներ պետք է վարձի ընկերութիւնն այն դեպքում միայն, յեթե վարչութիւնը փստահ է, վոր յենթադործակալները կը կարողանան իրենց վրա դրված պարտականութիւնները հաջողութեամբ կատարել և շոշափելի ոգտւտ տալ ընկերութիւնը, մանավանդ, վոր նրանց գործողութիւնների համար ընկերութիւնը լիակատար պատասխանատվութիւն է կրում:

28. Այն դեպքում, յեթե ընկերութիւնը յենթադործակալի գործունեութիւն մեջ գեղծումներ է հայանագործում կամ նկատում է, վոր նրա գործունեութիւնը շոշափելի արդյունք չի տալիս, պետք է լուծի յենթադործակալի հետ կնքած պայմանագիրը և ճիշն հաշվետվութիւն պահանջի նրանից՝ թե նրան արված պարտատոմսերի և կարոնների վերաբերյալ և թե վաճառքից գոյացած գումարների վերաբերյալ:

29. Գյուղում գործող կուլտուրական աշխատավորներին իրրի փոխառության յ նթադործակալների իրացման աշխատանքներին մասնակից դարձնելուց գատ, ընկերութիւնը կարող է ոգտագործել նրանց նաև վորպես միջնորդների՝ ընկերութիւն և տոանձին գյուղացիների միջև:

Միջնորդների մասնակցութիւնը փոխառության տարածման գործում կայանում է նրանում, վոր նրանք, վորպես ընկերութիւնից հեռու ընկած գյուղերի բնակիչներ, իրենց շրջանում կիլիներ են պատրաստում փոխառության համար և աշակցում են այդ

կրիքներին պարտատուներ ձեռք բերելու ընկերութիւնից, կանխիկ հաշվով:

Միջնորդների աշխատանքը նույնպէս վարձատրվում է ընկերութիւնն ուսացած կոմիսիոն գումարներից:

30. Ընկերութիւնն միջոցով իրացված պարտատուների վաճառքից գոյացած գումարները գյուղբանկին փոխադրելիս, ընդհանուր գումարի 10% թողնվում է ընկերութիւնն աշխատողութիւնն տակ: Այդ մասնատրուիները—փոխառութիւնն իրացման ժամ, վերա լրանալուց հետո—գյուղբանկը փոխանցում է ընկերութիւնն, վերջինիս հիմնական գրամագլուխներն ու ժեղացներն համար: Այդ մասնատրուիները համարվում են գյուղբանկի կողմից տրված անտոկոս ավանդ է մնում են ընկերութիւնն մոտ մինչև նրա գործունեութիւնն դադարում:

31. Բացի տատուկոյա մասնատրումից, հողուտ հիմնական գրամագլխի ընկերութիւնն ստանում է նաև յերկու տոկոս կոմիսիոն վարձատրութիւնն, ընկերութիւնն միջոցով իրացված պարտատուների անվանական գումարից: Հիշյալ յերկու տոկոսը պահում է ընկերութիւնն՝ գյուղբանկին փոխադրութիւնն կատարելիս:

32. Կոմիսիոն վարձատրութիւնն յերկու տոկոսից ընկերութիւնն ծածկում է իր այն ծախքերը, վոր կատարվել են փոխառութիւնն իրացման համար, հաշվելով այդտեղ նաև յենթագործակալներին է միջնորդներին տրվելիք վարձատրութիւնն, է բացի գրանից, հատուկ վարձատրութիւնն է տալիս ընկերութիւնն այն աշխատակիցներին, վորոնք անմիջական մասնակցութիւնն են ունեցել պարտատուների իրացման աշխատանքներում: Այդ գումարների բաշխումը ընկերութիւնն աշխատակիցների միջև կատարվում է ընկերութիւնն վարչութիւնն հայեցողութիւնն:

Յենթագործակալներին է միջնորդների վարձատրութիւնն Հափը վորոշվում է փոխադարձ համաձայնութիւնն:

33. Փոխառութիւնն իրացման աշխատանքների ընթացքում ընկերութիւնն կամ նրա յենթագործակալներին կողմից Հաետք է լինի վոչ մի հարկադրանք բնակչութիւնն վերաբերմամբ՝ պարտատուները գնելու համար: Նմանապէս տրգելվում է ընկերութիւնն փոխառուներին՝ ի հաշիվ նրանց ստանալիք փոխառութիւնն՝ պարտատուներ տալը: Բնակչութիւնն պետք է իմանա, վոր փոխառութիւնն պարտատուները կարող են վաճառվել միայն կամավոր հիմունքներով:

34. Այն գեպքում, յեթէ ընկերութիւնն կամ նրա յենթագործակալները ճշտութիւնն չեն կատարում գյուղբանկի հետ կնքած պարտագրերը փոխառութիւնն պարտատուների վաճառքից գոյացած գումարները վճարելու ժամկետների վերաբերմամբ, ինչպէս նաև այն գեպքում, յեթէ նրանք ժամանակին չեն հանձնում պարտատուներն ու կարոնները, գրամական գումարները լիովին վճար

րելուց է պարտատուներն ու կարոնները վերադարձնելուց բացի, ընկերութիւնն վճարում է գյուղբանկին, իսկ յենթագործակալներն՝ ընկերութիւնն հետեյալ տույժը՝ ամսական մեկ յեկ կես տոկոսի հաշվով, ժամկետանց գրամական գումարներից է ամսական կես տոկոսի հաշվով՝ ժամանակին հանձնված պարտատուների է կարոնների համար:

Պարտատուները վիչացներու կամ հանձնելու գեպքում ընկերութիւնն պարտավոր է վճարել գյուղբանկին:

ա) Փչացրած կամ հանձնված պարտատուների անվանական տրժեքը,

բ) Պետութիւնն կողմից փոխառութիւնն դիմաց վճարվող տոկոսները, թէ ըստ ժամկետավոր կարոնների է թէ ըստ ընթացիկ կարոնի, հաշվելով ժամանակը մինչև հաշիվ տեսներու որը:

գ) Ամսական մեկ յեկ կես տոկոսի հաշվով տույժ, հաշվելով ժամանակը պարտատուները ստանալու որից:

Կորած ժամկետավոր կարոնները վիչացներու կամ հանձնելու գեպքում, ընկերութիւնն պարտավոր է—հանձնած կամ վիչացրած կարոնների տրժեքը վերադարձնելուց բացի—վճարել գյուղբանկին նաև տույժ, հաշվելով ամսական մեկ յեկ կես տոկոս հանձնված կամ վիչացրած կարոնների տրժեքից, ըստ վորում ժամանակը հաշվվում է վճարման ժամկետը լրանալու որից:

35. Անկախ գրանից, այն գեպքում, յեթէ գյուղվարկային ընկերութիւնն խախտում է գյուղբանկի հետ կնքած պայմանագրերը փոխառութիւնն իրացման վերաբերյալ, գյուղբանկը կարող է լուծել պայմանագրերը է հատուցում պահանջել ընկերութիւննից իր կրած վնասների համար:

Բացի գրանից, դաշնակից հանրապետութիւնների Ֆինժոդկոմատը կենտրոնացրանկի համաձայնութիւնն կարող է գրկել ընկերութիւնն տուտոկոյա մասնատրում ստանալու իրավունքից, իսկ գյուղբանկը կարող է գրկել ընկերութիւնն նաև յենթատույտ կոմիսիոն վարձատրութիւննից, թեկուզ վերջինս արդեն ստացած լինի ընկերութիւնն:

Վերոհիշյալ հիմունքներով, տատուկոյա մասնատրման գումարները հանձնվում են կենտրոնացրանկին՝ բաշխելու այդպիսիները այն գյուղվարկային ընկերութիւնների միջև, վորոնց աշխատանքը փոխառութիւնն իրացման ասպարեզում կենտրոնացրանկի կողմից կարժանանա առանձին խրախուսանքի:

Ընկերութիւնններին չը վճարած յերկու տոկոսյա վարձատրութիւնն գյուղբանկի հայեցողութիւնն կտրվի այն ընկերութիւններին, վորոնք փոխառութիւնն իրացման աշխատանքների ընթացքում առանձին ճշտապահութիւնն է յետանդ են ցուցահանել:

36. Նկատի առնելով առաջին նվազում ստացված պարտատուների վաճառքի մոտավոր արդյունքները, ընկերութիւնն

պետք է նախորդ հայտնի գյուղբանկին՝ պարտատուների նոր պարտիա ուղարկելու մասին և ցույց տա այնպիսի քանակութիւն, վորը հնարավոր կլինի իրացնել տվյալ շրջանում, առաջիկա ամսվա ընթացքում:

37. Փոխառութեան տարածման հետ կապված բոլոր հարցերով, վորոնք հետագա պարզաբանութեան են պահանջում, ընկերութեանը պետք է դիմի գյուղբանկին:

38. Գյուղավարկային ընկերութեան վարչութեանը, պայմանագիր կնքելով գյուղբանկի հետ փոխառութեան իրացման մասին, պետք է լավ գիտակցի, վոր այդ գործառնութեանը նոր է, գեւ կարգավորված չէ, ուստի և առանձին ուշադրութեան է պահանջում:

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵ- ՏԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 1927 թ. ՅԵՐՐՈՐԴ ՊԵ- ՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ ԽԱՂԱՐԿՈՒ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ ա յ Վ Ե Տ Ա Ր Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

1927 թ. Յերրորդ Պետական Գյուղացիական Փոխառութեան իրացման գործառնութեանների վերաբերյալ հաշվետարութեանը գյուղավարկի սխառմի ստորին ցանցի գյուղավարկային ընկերութեաններում կառավարվում է գյուղ. վարկ. ընկերութեանների հաշվետարութեան, գործավարութեան և հաշվետվութեան մասին գործող ընդհանուր հրահանգի համաձայն, վոր հաստատված է Կենտր. գյուղբանկի վարչութեան կողմից 1925 թ. սպտտոսի 13 ին, ինչպես նաև համաձայն հետևյալ լրացումների.

1. Ընկերութեան կողմից կոմիտեն հիմունքներով վաճառելու համար ընդունված պարտատուները հաշվառման յենթարկելու, ինչպես նաև գյուղբանկի հետ հաշիվ տեսնելու համար ընկերութեանը վարում է «1927 թ. Յերրորդ Պետական Գյուղացիական Խաղարկու Փոխառութեան իրացման մատյան» այն ձևով, վորը մշակել է ԽՍՀՄ-ի ՖժԿ-ը Կենտր.գյուղբանկի համաձայնութեամբ և վորը հավանութեան է գտել ԽՍՀՄ ԲԳՏ կողմից: Այդ մատյանը հետագայում կրճատ կոչվելու է «փոխառութեան իրացման մատյան» (ձև № 1):

Հիշյալ մատյանում գրանցվում են հետևյալ մուտքն ու յեւթը:

ա) պարտատուների (վ. վ. 3, 4 և 5)

բ) այն ժամկետավոր կտրոնների, վորոնք կտրված են չիրացված պարտատուներից (վ. վ. 15 և 16):

գ) կանխիկ գրամի (վ. վ. 6, 8, 10, 11, 12 և 13):

դ) այն գյուղացիական փայերի, վորոնք ընդունված են ի հատուցումն պարտատուների, ըստ իրական արժեքի (վ. վ. 7 և 9):

Այդ մատյանում յուրաքանչյուր ամիս գուրս է բերվում ընկերութեան մոտ յեղած և յենթագործակալներին հանձնված պարտատուների միացորդն ըստ անվանական արժեքի (վ. 14):

Յենթագործակալներին տրվող պարտատուները, ինչպես նաև նրանցից հետ ստացվող չվաճառված պարտատուները չեն գրանցվում փոխառութեան իրացման մատյանի վոչ յեւթում և վոչ մուտքում: Յենթագործակալների վրա հաշվվող պարտատուների միացորդը գրանցվում է այն ձևով, ինչպես վոր նշված է վ. 14 ում, իսկ ժամկետավոր կտրոնները, վոր կտրված են չիրացված պարտատուներից, գրանցվում է մատյանի վ. 15 ում՝ ընկերութեան կողմից չիրացված պարտատուների կտրոնների հետ միասին: Նույն այդ մատյանում, ամսի վերջին որը, տվյալ ամսի վերջին գրանցումից հետո ընկերութեանը գիծ է քաշում և նրա տակ վ. վ. 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 15, և 16 ում գուրս է բերում շրջանառութեան ամսական գումարները: Կանխիկ գրամի, գյուղփայերի և կտրված ժամկետավոր կտրոնների միացորդը գրանցվում է միաժամանակ գումարների հաշորդ սողում:

Ամսական գումարներից ցած գուրս են բերվում շրջանառութեանների գումարները՝ փոխառութեան իրացումն սկսելու որից:

2. Յենթագործակալների հետ հաշիվ տեսնելու նպատակով նրանցից յուրաքանչյուրի համար հատուկ մատյանում բացվում է առանձին անձնական հաշիվ, վորտեղ նշվում է գրանցման ժամանակը և հիմքը, ընկերութեան կողմից յենթագործակալին տրվող պարտատուների անվանական գումարը, յենթագործակալից հետ ստացվող պարտատուների անվանական արժեքը, յենթագործակալի միջոցով վաճառված պարտատուների գումարը, հաշվելով նաև ընթացիկ կտրոնով հասանելի առկոսները, յենթագործակալի մոտ մնացած պարտատուների միացորդը և չվաճառված պարտատուների կտրոնների շարժումը (ձև № 2):

3. Ընկերութեան և նրա յենթագործակալների միջոցով վաճառված պարտատուներից գոյացած գրամական գումարները, ինչպես նաև գյուղփայերը գրանցվում են պարտատուների վաճառման գրամարկային տեղեկագրում, վորը կազմվում է յուրաքանչյուր գործառնական որվա համար (ձև № 3):

Այդ տեղեկագրում նշվում է տվյալ որվա ընթացքում կատարված վաճառքի համարն ըստ կարգի, վաճառված պարտատուների քանակը, նրանց անվանական արժեքը, ըստ ընթացիկ կտրոնի բարդված առկոսները, հաշվելով առ վաճառման որը (վաճառման որը հաշվի չի առնվում), վաճառքից գոյացած գումարը կանխիկ գրամով և գյուղացիական փայերով և վաճառքից գոյացած ամբողջ գումարը:

Ծ ա ն ո թ .— Տոկոսների բարդումն ըստ կտրոնների կատարվում է համաձայն կցված աղյուսակի:

Որը վերջանալուց հետո հաշվում են տեղեկագրի գրանցումները և որվա ընթացքում գոյացած ընդհանուր գումարը գրանցվում

ե. 1. Որագիր—մայր մատյանում, ա) «Դրամարկղի» հաշվի «պարտք»-ում (дебет) կանխիկ դրամի գումարը և «արժեքավոր թղթեր» ի հաշվի «պարտք» հոգվածում՝ գյուղփայերի անվանական արժեքը և բ) «Չանագան անձերի և հիմնարկների» հաշվի «պահանջ»-ում (кредит)՝ վաճառքից գոյացած ամբողջ գումարը, թե կանխիկ դրամով և թե գյուղփայերով, 2. «Փոխառության իրացման մատյանում» (ձև № 1):

4. Պարտատոմսերի և կտրոնների փոխադրության համար ընկերության կողմից կատարված փոստային ծախքերը, վոր հատուցվում են ֆինանսական կողմից, գրանցվում են որագիր—մայր մատյանում, «զանագան անձերի և հիմնարկների» հաշվի «պարտք»-ում (дебет) և, «զրամարկղ» ի հաշվի «պահանջ»-ում (кредит):

Գրանցումները կատարվում են յուրաքանչյուր ծախքից հետո: Ընկերության բոլոր մյուս ծախքերը, վոր կապված են փոխառության իրացման հետ—բացառությամբ գյուղփայերի փոխադրության հետ կապված ծախքերի—ծածկվում են ի հաշիվ ընկերության ստացած յերկուսուկուսյա կամիսին վարձատրության, ուստի և գրանցվում են «յեկամուսներ և ծախքերի» հաշվի «պարտք» հոգվածում և «զրամարկղ» ի հաշվի «պահանջ» հոգվածում:

Գյուղփայերի փոխադրության ծախքերը, յեթե այդ մասին հատուկ կարգադրություն չի լինում, կատարվում են գյուղբանկի հաշվին և գրանցվում են այն հաշվում, վորը մատնանշում է գյուղբանկը:

Գյուղփայերի փոխադրության վերաբերող հաշիվները չպետք և խառնել փոխառության իրացման հաշիվներին:

5. Տվյալ ամսվա ընթացքում վաճառված պարտատոմսերի անվանական արժեքից հոգուս ընկերության մասնատրվող յերկու տուկոս կամիսին վարձատրությունն ամսի վերջին որը գրանցվում է որագիր—մայր մատյանի «զանագան անձերի և հիմնարկների» հաշվի «պարտք» հոգվածում և «յեկամուսների ու ծախքերի» հաշվի «պահանջ» հոգվածում: Համապատասխան գրանցումներ են կատարվում նաև փոխառության իրացման մատյանում (վ. 10) և յեկամուսների մատյանում (Յերրորդ Գյուղփոխառության իրացման կոմիսիոն գումարներ):

Տասուկուսյա մասնատրման հաշիվը կազմվում է նույնպես ամսի վերջին որը, բոս վորում գումարը մասնատրվում է անցած ամսվա ընթացքում վաճառված պարտատոմսերի անվանական արժեքից գրանցվում է «Չանագան անձերի և հիմնարկների» հաշվի «պարտք» և «պահանջ» հոգվածներում, մինչև վոր գյուղբանկը սեղեկացնում է, թե վոր հաշվով պետք է կատարել գրանցումը: Համապատասխան գրանցում է կատարվում փոխառության իրացման մատյանում (վ. 11), միաժամանակ փոխանցելով գյուղբանկի անձնական հաշվի «պահանջ»-ում (кредит), վորպիսի հաշիվ ընկերությունը

պետք է բաց անի գյուղբանկի համար՝ «Չանագան անձերի և հիմնարկների» հաշվին վերաբերող ուժանդակ մատյաններում: Տասուկուսյա մասնատրման փոխանցումը «Չանագան անձերի և հիմնարկների» հաշվից՝ կատարվում է գյուղբանկի կարգադրությամբ:

6. Վաճառված պարտատոմսերից գոյացած գումարի վճարումը գյուղբանկին գրանցվում է որագիր—մայր մատյանում, «Չանագան անձերի և հիմնարկների» հաշվի «պահանջ»-ում, բոս վորում նշվում է կանխիկ դրամի ընդհանուր գումարը և գյուղփայերի արժեքը և նույն հաշվի «պահանջ» հոգվածում, բոս վորում — ա) «զրամարկղի» հաշվում նշվում է կանխիկ դրամի գումարը և բ) «արժեքավոր թղթերի» հաշվում նշվում է գյուղփայերի գումարը: Համապատասխան գրանցումներ կատարվում են փոխառության իրացման մատյանում (ձև № 1 վ. վ. 8 և 9):

7. Այն գեպքում, յերբ գյուղբանկի և ընկերության միջև հատուկ համաձայնություն է կայանում այն մասին, վոր պարտատոմսերի վաճառքից գոյացած և գյուղբանկին հասանելիք դրամական գումարները չը փոխադրվեն, այլ փոխանցվեն վորեւ հաշվում բոս գյուղբանկի ցուցմունքի, այդ գեպքում հիշյալ գումարները գրանցվում են որագիր—մայր մատյանի «Չանագան անձերի և հիմնարկների» հաշվի «պարտք»-ում և գյուղբանկի մատնանշած հաշվի «պահանջ»-ում:

8. Պարտատոմսերի վաճառքից գոյացած դրամական գումարները ժամանակին չը հանձնելու և պարտատոմսերը և կտրոնները ժամանակին չուղարկելու համար ընկերության կողմից վճարվող տույժը գրանցվում է որագիր—մայր մատյանի «յեկամուսների և ծախքեր» ի հաշվի «պարտք» հոգվածում և «զրամարկղ» ի հաշվի «պահանջ» հոգվածում: Նույն կարգով գրանցվում է նաև պարտատոմսերը և կտրոնները չը հանձնելու համար վճարվող տույժը (բաժանք V, հոդ. 34):

9. Պարտատոմսերն ստանալուն պես, ընկերությունը պարտավոր է անհապաղ հայտնել գյուղբանկին ստացված պարտատոմսերի անվանական գումարը, նրանց կից առաջին կտրոնի ժամկետը, պարտատոմսերն ուղարկած հիմնարկության անունը և ուղեկցող գրության համարն ու ամսաթիվը:

10. Ստացված պարտատոմսերը, ինչպես նաև չը վաճառված պարտատոմսերից կտրած ժամկետավոր կտրոնները հաշվի յեն առնվում ընկերության կողմից ընդհանուր ամսական հաշվետվություններում՝ հատկապես այդ նպատակով բացված արտաշիւ հաշվում (ձև № 1), վորը կրում է հետեյալ անունը՝ «Իրացման յենթակա Յերրորդ Պետական Խաղարկու Փոխառության պարտատոմսեր»:

Այդ հաշվով, գրանցումները փոխառության իրացման մատյանում (ձև № 1 վ. վ. 3, 4, 15 և 16) կատարվում են պարտատոմսերի և կտրոնների գրանցման հետ միաժամանակ, բոս վորում

ինչպես այդ մատյանում, նույնպես և արտակշիռ հաշվում չեն ներ-
վում վոչ յենթագործակալներին արված պարտատուները և վոչ և
նրանց կողմից ընկերութեանը վերադարձրած պարտատուները: Ար-
տակշիռ հաշվում կրանցված պարտատուների մնացորդը պետք է
հավասար լինի ընկերութեան և յենթագործակալների մոտ յեղած
արժեքների (չը վաճառված պարտատուների կտրոնների և պար-
տատուների) ընդհանուր մնացորդին (ձև № 1, վ. վ. 14 և 15):

Հ ա ռ վ ե ս Վ ու ը յ ու ն

11. Ստորին ցանցի մեջ մտնող գյուղավարկային ընկերութեան-
նը ամեն ամիս, վոչ ուշ, քան հաշվետու ամսին հաջորդող ամսին
2-ին ներկայացնում է գյուղբանկին հաշվետվութեան Յերբուրդ Պե-
տական Գյուղացիական Խաղարկու Փոխառութեան իրացման աշխա-
տանքների ընթացքի մասին, ըստ վորում հաշվետվութեան տեղե-
կագրի ձևը համապատասխանում է փոխառութեան իրացման մատ-
յանի ձևին (ձև № 1): Հաշվետու տեղեկագրի ձևն ընդ ամին կցվում
է (ձև № 4): Հաշվետու տեղեկագրում ընդհանուր գումարներով
ցույց են արվում հաշվետու ամսվա ընթացքում, ինչպես նաև
իրացման աշխատանքներն սկսելու օրից վաճառված պարտա-
տուներից գոյացած դրամական գումարների և արժեքների շար-
ժումը, ինչպես նաև կանխիկ դրամի, պարտատուների, գյուղացի-
ական փայերի և չի վաճառված պարտատուներից կտրած ժամկե-
տավոր կտրոնների մնացորդները:

12. Փոխառութեան պարտատուների իրացումից գոյացած դր-
րամական գումարների փոխադրումը, և պարտատուների արժեքի
դիմաց ընդունված գյուղփայերի առաքումը գյուղբանկին կատար-
վում է ընկերութեան կողմից ամեն ամիս, հերթական հաշվետվու-
թեան հետ միասին:

Պարտատուների վաճառքից գոյացած դրամական գումարների
փոխադրման մոտավոր կարգը սահմանվում է գյուղբանկի կողմից:
Հիշյալ գումարները փոխադրելիս, ընկերութեան և նրա յենթագոր-
ծակալների միջոցով իրացված պարտատուների անվանական գու-
մարից ընկերութեանը հանում է յերկուտուրյա կոմիսիոն վար-
ձատրութեան գումարը, 10⁰ օյա մասնատրումը և պարտատուների
ու կտրոնների փոխադրութեան ծախքերը:

13. Ընկերութեանները կտրում են պարտատուների ժամկե-
տավոր կտրոնները ժամկետը լրանալու նախորդակին, գործառնու-
թյունը վերջացնելուց հետո: Այդ կտրոնները, ինչպես և չը վա-
ճառված պարտատուներից կտրված կտրոնները — վոր գտնվում են
յենթագործակալների մոտ — պետք է գտնվորվեն ըստ ժամկետնե-
րի և արժեքի (հինգ և տաս կոպեկ) և պահվեն մաքսանիշով փակ-
ցված կապերում (փաթեթներում):

14. Իրացման աշխատանքներն ավարտելուց հետո, չը վաճառ-

ված պարտատուները սահմանված ձևով կազմված ցուցակով ընկե-
րութեանն ուղարկում է գյուղբանկին վերջին ամսական հաշվետու-
վութեան հետ միասին: Միաժամանակ ընկերութեանները ուղարկում
են գյուղբանկին նաև հ. 13-ում հիշատակված կտրոնները, նույն
ցուցակով:

15. Յեթե պարտատուները կամ կտրոնները փոխադրվում են
փոստով, այդպիսիները ուղարկվում են „արժեքավոր ծրար“-ով
ըստ վորում ապահովագրվում է նրանց ամբողջ արժեքը: Պարտա-
տուների և կտրոնների փոխադրութեան ծախքերը ընկերութեանը
հանում է այն գումարներից, վորոնք գոյացել են վերջին ամսվա
վաճառքից: Փոխադրութեան վերաբերյալ արդարացուցիչ փաստա-
թղթերը ուղարկվում են պատվիրված ծրարով ամսական հաշվե-
տվութեան հետ միասին:

16. Յենթագործակալների կողմից ներկայացվող հաշվետվու-
թյունը, ինչպես նաև նրանց մոտ յեղած դրամը և չը վաճառված
պարտատուներից կտրած կտրոններն ընկերութեանը հանձնելու
կարգը պետք է սահմանվի ընկերութեան կողմից յուրաքանչյուր
գեպրում այն հաշվով, վոր ընկերութեանը կարողանա ճշտութեամբ
կատարել գյուղբանկին հետ կնքած պայմանագրով հանձնառած պար-
տականութեանները, ինչպես նաև ներկա հրահանգը և ԽՍՀՄ ՖժԿ-ի
չըջաբերակներ: Կտրոնների արժեքի հատուցման ժամկետը լրանա-
լիս, յենթագործակալները իրենց հերթական ամսական հաշվետվու-
թեան հետ միասին ներկայացնում են ընկերութեան իրենց մոտ
յեղած պարտատուները՝ ժամկետավոր կտրոնները կտրելու համար:

Յենթագործակալների հաշվետու տեղեկագրի մոտավոր ձևը
կցվում է (ձև № 5):

17. Պարտատուները և կտրոնները ժամանակին չուղարկելու
և դրամական գումարները չփոխադրելու, ինչպես նաև իրացման
աշխատանքներն ավարտելուց հետո մնացած պարտատուներն ու
կտրոնները չը հանձնելու համար գյուղբանկը տույժ է բռնադան-
ձում ընկերութեանից, իսկ ընկերութեանը՝ յենթագործակալից այն
չափով ու կարգով, վոր հիշատակված են հրահանգի հ. 36-ում: Այն
գեպրում, յեթե յենթագործակալը վորեք պատճառով հաշվետվու-
թյուն չի ներկայացնում ընկերութեանը, վերջինս այնուամենայնիվ
պարտավոր է ժամանակին հաշվետվութեան ներկայացնել գյուղ-
բանկին:

18. Յենթագործակալների այն հաշվետվութեանները, վորոնք
ժամանակին չեն ներկայացվել և չեն մատել ընկերութեան հերթական
հաշվետվութեան մեջ, պետք է հետագայում ուղարկվեն գյուղբան-
կին լրացուցիչ կերպով, ընկերութեան հաջորդ հերթական հաշվետու-
վությունից առանձին: Յենթագործակալների ուշադրած հաշվե-
տվութեանների հետ միասին ընկերութեանն ուղարկվում է գյուղ-
բանկին նաև յենթագործակալների կողմից ներկայացված դրամա-
կան գումարները:

04861
0001

Գյուգիսարիային բնակիչություն
1927 թ. Յիսուրդ Գյուգիսարիային խաղաղության փոխադրված
Իսպանիայի մասերին

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ

1927 թ. 3-րդ Գյուղացիական Խնայարկու Փոխաուսթյան Իրացման վերաբերյալ

1927 թ. Զ. րդ Պետական Գյուղացիական Սնդարկու Փոխառու-
թյան իրացման վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ №2

Ужюу 74000.

Կոյիս Ընկերութեան

3-րդ Պետական Գյուղացիական Անդադրի Գլխավոր Փոխանորդի
Իրացման մասին

“ ” 162 ж.

1	Ամիս և ամսաթիվ	
2	Անվանական գումար	Ստացված պարտ.
3	Ընթացիկ կտրոնի ժամկետը	
4	Անվանական գումար	Վճարված պարտատոմսեր
5	0 0 0 0 ըստ կտրոնի	
6	Ընդամենը ստացված և	
7	Պահված և կոմիտեն վարձատր.	
8	Անվանական գումար	Հանձնված պարտատ.
9	Ընթացիկ կտրոնի ժամկետը	
10	Գումարը	Զվանառ. պարտատ. ժամկետովը կրթ. բնականորեն հանձնվ.
11	Կտրոն. ժամկետը	
12	Գումարը	Մնացած պարտատ.
13	Ընթացիկ կտրոնի ժամկետը	
14		Մանրթույրներ

3-րդ Գետական Գյուղացիական Խաղարկու Փոխառությունը իրացման վերաբերյալ 192 թ.

(Կենթագրվածակալի)

Տ Ե Ղ Ե Վ Ա Գ Ի Ի №

24 5.

Ընկերություն, բանկի անունը

Յ Ո Ւ Յ Ա Կ

3-րդ Գյուղացիական Խաղարկու Փոխառությունը չիրացված պարտատոմսերի և հրանցից կարված ժամկետավոր կտրոնների, վորոնք իրացման աշխատանքներն ավարակույց հետ պետք և հանձնվեն
գյուղացիներ
Ֆինրաժնին

192 թ.

Սերիաներ	Պարտատոմսերի №-ներ	Պարտատոմսերի քանակը ըստ արժ. քի	Պարտատ. ընդհանուր անվ. գումարը	Ընթացիկ կտրոնի ժամկետը	Կտրոնների քանակը ըստ արժ. քի	Կտրոնների ընդհանր. անվան. գումարը
		5 ա. 10 ա.			5 ա. 10 ա.	

Հանձնող հիմնարկի պատասխանատու անձերի ստորագրությունը.
Հիշյալ արժեքները.....ա. և գումարի ստացված են և ընդունման առ-
թիվ պատշաճ անդորրագիր և արված.....Ք-ով:
Գանձապահի ստորագրությունը

*) Հարկավոր չեղած մասը ջնջվում է:

24 10.

Յ Ո Ւ Յ Ա Կ

3-րդ Գետական Գյուղացիական Խաղարկու Փոխառությունը պարտատոմսերի, վորոնք հանվում են
զեկոգրվում մինչև վիճակահանության որը:
(հիմնարկի անունը)

192 թ.

Սերիաներ	Պարտատոմսերի №-ներ	Նշումներ պարտատոմսերը վաճառելու որվա մասին	Սերիաներ	Պարտատոմսերի №-ներ	Նշումներ պարտատոմսերը վաճառելու որվա մասին

Հիմնարկության պատասխանատու անձերի ստորագրությունը

ՎԱՎԵՐԱՑՆՈՂ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

192 թ. հերկա ցուցակը համեմատված է. „Вестия ЦИК СССР“ 192 թ. հունիսի 24-ի հետ, ըստ վորում պարզվել է, վոր ցուցակում հիշյալ պարտատոմսերը չը չանցին *):
Շահել են հետևյալ պարտատոմսերը, վորոնք հիշված են ցուցակում
ոներիայում.....
Ստորագրություններ

*) Հարկավոր չեղած մասը ջնջվում է:



ՀՀ Ազգային գրադարան



NL0208397

27992